



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎ ՀԱՅՈՒԹ

Ա.Ս. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՊԻՏԻ ՄԱՏՈՒՅԱՆԵ ՔՐԵՍԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 9 Նոյեմբերին, Եպիսկոպոսական Ս. Պատարագ պիտի մատուցուի քրեսենթա Հովիտի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ, ծուխի հաստատման երրորդ տարեդարձին առիթով:

Ս. Պատարագ պիտի մատուցանե եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ Թեմիս բարեհնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան:

Ս. Խորանին պիտի սպասարկե Եկեղեցւոյ հոգեւոր մատակարար Արք. S. Արտակ Զինյ. Տեմիրձեան: Արարողութիւնը կը սկսի կ.ե. ժամը 1-ին: Եկեղեցւոյ հասցեն՝ Է՝ 2817 Montrose Avenue, Լա Քրեսենթա:

Ուրբաթ, 14 Նոյեմբերի երեկոյեան ժամը 8:30-ին, Եկեղեցւոյ պայծառութեան համար, ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ Կլենտեյլի Brandview Collection սրահին մէջ:

Զեղսարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազնան Յօր հովանաւորութիւնը եւ կազմակերպուած է Եկեղեցւոյ հոգեւոր մատակարարին, հոգաբարձութեան եւ տիկնանց միութեան կողմէ:

PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY ON THE 3RD ANNIVERSARY OF THE CRESCENTA VALLEY PARISH

On Sunday, November 9th, the Armenian Apostolic Church of Crescenta Valley will celebrate its 3rd anniversary. On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon. The Prelate will be assisted at the altar by parish pastor Rev. Fr. Ardark Demirjian.

The service will begin at 1:00 p.m.

The annual banquet will take place on Friday, November 14th, at 8:30 p.m., at Brandview Collection in Glendale. The banquet is being held under the auspices of the Prelate and is organized by the Pastor, Board of Trustees, and Ladies Auxiliary.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՅԵՑ ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ ՏՕՆԻՆ ԵՒ Ս. ՆԱՐԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 2 Նոյեմբերի առաւոտուն, Ամենայն Սրբոց տօնին եւ Ենսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ անուանակոչութեան եւ հիմնադրութեան 45րդ տարեդարձին առիթով, Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցանեց եւ մատաղօրինեցի արարողութիւնը կատարեց Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան: Ս. Սեղանին սպասարկեցին Հոգէ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան եւ Արք. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան:

Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեցին Եկեղեցւոյ Դպրաց դասը եւ Կիրակնօրեայ Վարժարանի պարման-պարմանուիխները:



Իր քարոզին մեջ, Առաջնորդ Սրբազն Հայրը և այս փառք եւ գոհութիւն առաքեց Աստուծոյ, եւ օրինեց յիշատակը բոլոր այս երախտաւորներուն, որոնք 45 տարիներ առաջ տեսիլքը եւ իմաստութիւնը ունեցած են հիմնելու այս Եկեղեցին՝ ի շինութիւն եւ ի զարթնում շրջանի հայ համայնքի հոգեւոր կեանքին: Ազա, Սրբազն Հայրը խոսեցաւ սուրբ բարի հասկացողութեան եւ

Ամենայն Սրբոց տօնին կարեւորութեան մասին, նշելով անոնց մաքրամաքուր կենցաղն ու սուրբ վարքը, որուն պատճառով անոնք շահած են Աստուծոյ մտերմութիւնը: «Սուրբերը մեզի պէս սովորական մարդիկ են, սակայն երբ անոնք Յիսուս Քրիստոսը իրենց կեանքին կեղրոնք, իրենց մտածումին առանձքը դարձուցին եւ ապրեցան համաձայն Տիրոջ պատուիրաններուն, անոնք շնորհք ստացան Աստուծմէ կանգնելու իր դիմաց եւ փառաւորելու զԱյն: Ոհա, սուրբերը մեզի համար կենդանի օրինակ են, որպէսզի մենք ալ կարենանք մեր հոգիներն ու սիրտերը մաքրագտելով ամեն տեսակի մեղանչական մտածումներէ, խորհուրդներէ ու խօսքերէ, արժանի ըլլանք իրենց նման ստանալու փառքի պսակը, որ Տերը իբրեւ զնահատանք պիտի տայ բոլոր արդարներուն», պատգամեց Սրբազնը, Եգրակացնելով՝ թէ «Ընթանանք սուրբերու կենաց ճանապարհեն, որպէսզի նաեւ իրենց հետ արժանի ըլլանք փառաց պսակին»:

Յընթացս Ս. Պատարագին, Առաջնորդ Սրբազն Հայրը գնահատելով Եկեղեցւոյ Երիտասարդ ծառայողներ Թուխման Խաչատուրեանի եւ Յովիկ Քեօշկերեանի տարիներու ծառայութիւնը եւ նուիրումը, անոնց շնորհեց ուրար կրելու իրաւունք, քաջալերելով անոնց՝ առաւել նուիրուածութեամբ ծառայելու Եկեղեցիին ու Կիրակնօրեայ Վարժարանին:

Պատարագի աւարտին թափօրը առաջնորդուեցաւ «Աւետիսեան» սրահ, ուր Եկեղեցւոյ Տիկնանց Միութեան կողմէ պատրաստուած էր

մատաղը: Սրբազն Յայրը օրինեց մատաղը, կտրեց 45 ամեակի Նուիրուած կարկանդակը, ապա բարձր գևահատեց հոգեւոր հովհին, Յոգաբարձութեան Եւ Տիկնաց Սիութեան մատուցած ծառայութիւնը, ինչպէս նաեւ մատաղին իրենց Նիւթաբարոյական օժանդակութիւնը բերած բոլոր հաւատացեալները:

Սրբազն Յօր «Պահպանիչ»ով Եւ «Կիլիկիա» մաղթերգի կատարումով վերջ գտաւ հոգեպարար արարողութիւնը:

NAME DAY CELEBRATION OF HOLY MARTYRS CHURCH

On Sunday, November 2nd, Holy Martyrs Church of Encino celebrated its name day as well as its 45th anniversary with Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and the blessing of *madagh*. The Prelate was assisted at the altar by Christian Education Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian and parish pastor Rev. Fr. Razmig Khatchadourian.



The Prelate began his sermon by giving thanks and praise to Almighty God for granting the opportunity to come together to celebrate the name day of the church and the 45th anniversary of its establishment. The Prelate's sermon centered on the feast of All Saints' Day, which was celebrated the day before, in which he extolled the virtues of our saints, reminding the congregation that our saints

were regular human beings, just like us, however they made our Lord Jesus Christ the central element of their lives and lived faithfully, thus receiving the reward and glory of being in the presence of God. He urged the faithful to learn from the example of our saints by living as good, loving Christians so that we too may one day be worthy of the heavenly Kingdom of our Lord.

In conclusion, and in honor of the 45th anniversary of the parish, the Prelate praised the initiative of the founders who decades ago had the vision and foresight to set the foundation for the establishment of the church and the subsequent community. He congratulated the parish and wished them prosperity in all their future undertakings.

Following his sermon, the Prelate bestowed upon acolytes Toukhman Khatchadourian and Hovig Keushgerian the privilege of bearing a stole in recognition and commendation for their devoted service to the church.

At the conclusion of the services, the Prelate was led in a procession to "Avedessian" Hall where he blessed the *madagh* and participated in the cutting of the 45th anniversary cake along with the parish Pastor, Board of Trustees Chairman, and Ladies Auxiliary Chairlady.

The celebration concluded with the Prelate's benediction and the collective singing of "Gligia".

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԱԾԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՒԱՔ

Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդներու խորհուրդը, հովանաւորութեամբ եւ առաջնորդութեամբ Յայ Առաքելական Եկեղեցւոյ գոյգ առաջնորդներուն՝ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ Գերշ. S. Յովսան Արք. Տերտերեանի, Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդ Գերշ. S. Եուճին Թափլան Արքեպիսկոպոսի, եւ Ղըպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդ Գերշ. S. Սերաբիոն Արքեպիսկոպոսի, տարուան ընթացքին միատեղ պատարագ, Եկեղեցական արարողութիւններ, Եկեղեցականաց հաւաքներ, Երիտասարդաց թէ աշակերտական աշխատանքային հանդիպումներ կը կազմակերպէ:



Ծրագրով տարեկան չորրորդ հաւաքը, Շաբաթ, 1 Նոյեմբեր 2008ին, Կլենտեյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 9:30-Էն յետմիջօրէ ժամը 2:30:



Կ'աղօթեն եւ փոխադարձ փորձառութիւններով կը հարստանան: Նշելով, որ օրուան հաւաքին նշանաբանն էր «Քրիստոնեական Դաստիարակութեան անհրաժեշտութիւնը ընտանիք եւ Եկեղեցին ներս», ան շեշտեց ծնողաց եւ դաստիարակներու պարտականութիւնը, իրենց զաւակաց եւ հոգեւոր խնամքին յանձնուած մանուկներու եւ պատանիներու կրօնական դաստիարակութիւն շամբել, որպեսզի հոգեւոր ու բարոյական գէնքերով զիսուած՝ չշեղին Աստուծոյ ճամբաներէն:

Օրուան պատարագին էր Յոգ. S. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան: Զոյր

Միջ-թէմական կիրակնօրեայ վարժարաններու կազմակերպիչ յանձնախումբին նախաձեռնութեամբ, ծրագրուած յայտագիրով ու հովանաւորութեամբ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Առաջնորդ Սրբազան Յայրերուն, տեղի ունեցաւ միջ-կիրակնօրեայ վարժարաններու աշակերտական միորեայ դաստիարակչական յահանապետութիւնը միջազգային աշխատանքային հանդիպումներ կը կազմակերպէ:

Աշակերտութեան բարի գալուստի եւ ողջոյնի խօսք արտասանեց Բարձր. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Սրբազան Յայրը հոգեւոր այս հաւաքները գեղեցիկ առիթներ համարեց, ուր քոյր Եկեղեցիներ իրենց Առաջնորդ Սրբազան Յայրերով, աշակերտութեամբ եւ ուսուցչական կազմերով կը հաւաքուին եւ համատեղ

Եկեղեցիներու հոգեւորականներ եւ աշակերտներ, իրենց մայրենի լեզուներով, մասնակցեցան սուրբ պատարագի երգեցողութեան:

Դըպտի Եկեղեցւոյ Առաջնորդ՝ Գերշ. Տերաբիոն, ամփոփ գիծերու մէջ Ներկայացուց թէ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիները ինչո՞ւ նոյնադաւան քոյր Եկեղեցիներ են եւ թէ՝ պատմական, վկայաբանական ու աստուածաբանական ինչ հարուստ ժառանգ ունեցած են եւ այսօր, ինչո՞ւ անհրաժեշտ է անոնց գործակցութիւնը:

Ասորի Եկեղեցւոյ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Եռճին Զափլան, փոխան քարոզի, խօսեցաւ ընտանիք-Եկեղեցի-դպրոց յարակցութեան եւ կրօնական հոգեւոր ուղղափառ դաստիարակութեամբ գինուելու անհրաժեշտութեան մասին:

Ս. Պատարագի ընթացքին, աշակերտներ Ս. Յաղորդութիւն ստացան: Իսկ միջ-կիրակնօրեայ վարժարաններու կազմակերպիչ յանձնախումբին անունով, Տիկ. Փաթրիսիա Ալաֆ Երախտագիտական յատուկ յուշատախտակներ յանձնեց Ներկայ Առաջնորդ Սրբազն հայրերուն: Գերպ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան, յանուն Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտերեանի, ստանձնեց յուշանուերը:

Յաւաքական խմբանկարէ եւ ճաշէ ետք, շուրջ Երկու հարիւր յիսուն հաշուող աշակերտներ, տարիքի համածայն, բաժնուեցան խումբերու եւ վարիչ-ուսուցիչներու առաջնորդութեամբ ունեցան աշխատանքային դաստիարակչական դասապահ: Դասարանային աշխատանքներու աւարտին, իւրաքանչիւր խումբ սերտուած նիւթերու եւ աստուածաշնչական պատումներու ամփոփ պատկերը գծանկարներով եւ պատկերուած ցուցատախտակներու վրայ Ներկայացուց:

Միջ-կիրակնօրեայ վարժարաններու միօրեայ դաստիարակչական հաւաքը յետ միջօրէի ժամը 2:30ին իր աւարտին հասաւ:

4TH ANNUAL ORIENTAL ORTHODOX CHURCHES SUNDAY SCHOOL GATHERING

The 4th annual spiritual gathering of Oriental Orthodox Sunday Schools took place on Saturday, November 1st, at St. Mary's Church in Glendale under the auspices of the Prelates of the Oriental Orthodox Churches H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian (Primate, Western Diocese), H.E. Mor Clemis Eugene Kaplan (Syriac Orthodox Church), and H.G. Bishop Serapion (Coptic Orthodox Church).



The day began with Divine Liturgy celebrated by Prelacy Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian, in which clergy and students from all the churches participated in their respective languages. The welcoming sermon was offered by the Prelate who

commended the organizing of the annual gathering which brings together youth from the Armenian, Coptic, and Syriac Churches to share in their common faith and learn from one another. Given that the theme for the gathering was “Christian Education: Home-Church Connection”, the Prelate stressed the individual roles of church leaders and parents in the educating of our youth with our religious values.

Next, Bishop Serapion gave a sermon (*Why We Are Sister Churches*) during which he stressed why cooperation and collaboration among the churches is crucial. The final sermon was given by Archbishop Kaplan (*Christian Education: Building the Home-Church Connection*) on the importance of Christian Education in the lives of our youth.

After the offering of Holy Communion, on behalf of the organizing committee Mrs. Patricia Allaf presented plaques to Archbishop Mardirossian, Archbishop Kaplan, Bishop Serapion, and Very Rev. Fr. Dajad Yardemian, who accepted the plaque on behalf of Archbishop Derderian, in gratitude for their leadership and guidance.

Following the group photo and lunch, the students were placed into workshop groups according to age. Each group later presented the information they were taught to the rest of the participants.

The meeting concluded at 2:30 p.m. with the Lord's Prayer and the presenting of gifts.